

Դարբինյան Ա.
Խալաթյան Լ.

Երևանի պետական համալսարան

ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻ
ՔԱՆԻ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ABSTRACT
ON SOME TRADITIONAL AND MODERN METHODS OF TEACHING
ENGLISH

The present article discusses different approaches of teaching foreign languages practiced at different universities and higher educational institutions around the world. It should be noticed that there are various methods of teaching foreign languages (such as direct communicative, grammatical, intensive, different testing methods, etc.), the choice of which depends on the final aim of the target language being studied. Throughout the history of teaching languages a number of different teaching approaches and methodologies have been worked out and implemented by distinguished linguists in almost every corner of the world. After being tested some of them proved to be more effective than others and, therefore, gained popularity. The focus on rather successful approaches and methods is to enable the learner to communicate in the second language effectively and appropriately in various situations the speaker would likely find himself in.

Key words: *analytical thinking, testing, lifelong learning, cultural values, error detection, personal approach, lingual method, grammatical and lexical units.*

РЕЗЮМЕ
О НЕКОТОРЫХ ТРАДИЦИОННЫХ И СОВРЕМЕННЫХ МЕТОДАХ
ОБУЧЕНИЯ АНГЛИЙСКОМУ ЯЗЫКУ

В данной статье рассматриваются различные подходы к обучению иностранным языкам, используемые в разных университетах и в высших учебных заведениях по всему миру. Можно заметить, что существуют

различные методы обучения иностранным языкам (такие как прямое общение, грамматический, интенсивный, метод общения, различные виды тестов), выбор которого зависит от конечной цели изучения изучаемого языка. На протяжении всей истории преподавания языков был опробован и испытан ряд различных подходов и методов преподавания, причем некоторые из них были более эффективными, чем другие и по этой-же причине стали популярными. Целью этих методов является предоставление учащемуся возможности эффективно и надлежащим образом общаться в различных ситуациях, в которых он может оказаться.

Ключевые слова: *аналитическое мышление, тестирование, обучение на протяжении всей жизни, культурные ценности, выявление ошибок, личностный подход, языковой метод, грамматические и лексические единицы.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում քննարկվում են աշխարհի տարբեր համալսարաններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում կիրառվող օտար լեզուների դասավանդման տարբեր մոտեցումներն ու մեթոդները: Պետք է նշել, որ գոյություն ունեն օտար լեզուների դասավանդման բազմապիսի մեթոդներ (ինչպիսիք են՝ ուղղակի հաղորդակցման մեթոդը, քերականական մեթոդը, ինտենսիվ մեթոդը, տարբեր տեսակի թեստային ստուգման մեթոդները, և այլն), որոնց ընտրությունը կատարվում է՝ ելնելով թիրախային լեզուն ուսումնասիրելու վերջնական նպատակից: Լեզուների ուսուցման պատմության ընթացքում մի շարք տարբեր դասավանդման մոտեցումներ ու մեթոդաբանություններ են մշակվել հայտնի լեզվաբանների կողմից և փորձարկվել աշխարհի տարբեր անկյուններում: Պարզվել է, որ նրանցից մի քանիսն ավելի արդյունավետ կիրառություն են գտել, քան մյուսները, և, բնականաբար, առավել լայն տարածում են գտել լեզվի ուսուցման ընթացքում: Առավել հաջողված մոտեցումների և մեթոդների հիմքում սովորողին տարբեր իրավիճակներում արդյունավետ և պատշաճ կերպով հաղորդակցվելու հնարավորություն ստեղծելն է, որոնցում նա ամենայն հավանականությամբ կարող է հայտնվել:

Բանալի բառեր՝ *վերլուծական մրաժողություն, թեստավորում, շարունակական կրթություն, մշակութային առանձնահատկություններ, սխալների բացահայտում, անհատական մոտեցում, բառային և քերականական միավորներ:*

Ուսումնասիրելով և դիտարկելով աշխարհի տարբեր համալսարաններում կիրառվող օտար լեզուների դասավանդման բազմապիսի մոտեցումները, ակնհայտ է դառնում, որ գոյություն ունեն օտար լեզուների դասավանդման զանազան մեթոդներ (ինչպես, անմիջական շփման, քերականական, տեսաձայնային, հաղորդակցային, թեստային, և այլն), որոնց համապատասխան ընտրությունը կատարվում է համաձայն նոր ուսուցանվող լեզվի վերջնական նպատակի: Օրինակ, Հռոմի համալսարանում դասերը կրում են գործնական բնույթ, և նախապատվությունը տրվում է **անմիջական շփման մեթոդին**, քանի որ օտար լեզուն դասավանդվում է հիմնականում ծառայեցնելու և նպաստելու զբոսաշրջության զարգացմանը: Եվ այս նպատակով օտար լեզվի դասընթացները կազմակերպվում և են համապատասխան միջավայրերում, դիցուկ, թանգարաններում, բացօթյա զբոսայգիներում, պատմական կոթողների կամ այլ հուշարձանների հարևանությամբ: Իսկ Գերմանիայի տեխնիկական ուղղվածություն ունեցող բարձրագույն ուսումնական հաստատություններում օտար լեզվի դասերն անց են կացվում տեխնիկապես բարձր հագեցվածություն ունեցող լսարաններում, որտեղ յուրաքանչյուր ուսանողի հնարավորություն է տրվում օգտվել անհատական օգտագործման տեխնիկական միջոցներից և զարգացնել ինքնուրույն աշխատելու հմտությունները: Նմանօրինակ մոտեցումները նպաստում են դասերի նորովի կազմակերպմանը, զարգացնում սովորողների ստեղծագործաբար մտածելու ունակությունը, լրացնում են լսարանային դասավանդման բացը և դյուրացնում նյութի թե՛ մատուցումը, և թե՛ ընկալումը:

Այլ երկրներում, որտեղ հիմնական լեզուն անգլերենը չէ, դասավանդումը անց է կացվում երկու փուլով. առաջին փուլում օտար լեզուն դասավանդվում է առավել ընդհանուր ձևով, որտեղ անշուշտ հաշվի է առնվում սովորողների լեզվի իմացության տարբեր մակարդակներ ունենալը (A1, A2, B1, B2, C1, C2), իսկ երկրորդ փուլում անգլերենն արդեն նպատակաուղղվում է մասնագիտական ոլորտի տարբեր առարկաների ընկալմանը և նշված բնագավառում անգլերեն լեզվով ուսումնասիրություններ կատարելու կարողությանը: Այս մոտեցման հիմքում ընկած է **լեզվի ուսուցումը որպես շփման իրական և լիարժեք միջոց** լինելը, և, այս նպատակով, առաջնախնդիրը ուսանողի մոտ ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքի զարգացումն է՝ հիմնական շեշտը դնելով քերականական կանոնների, մասնագիտական եզրույթների յուրացմանն ու տարբեր լեզվական կառույցների ճիշտ օգտագործմանը: Հետևաբար, լեզվի ուսուցման առաջնային նպատակն այս դեպքում ուսանողի ընկալելու և արտահայտվելու ունակության զարգացումն է: Հարկ է նշել, որ վերոնշյալ մեթոդը մեծամասամբ կիրառություն է ունեցել նախկին Խորհրդային Միության երկրների համալսարաններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում,

որտեղ օտար լեզվի դասավանդումը կատարվում էր երկու լեզուների՝ մայրենիի և ուսուցանվող լեզվի զուգադրությամբ: Այս մոտեցման դեպքում սովորողների համար հնարավորություն էր ստեղծվում ուսուցանվող նյութը համեմատել, զուգադրել և վերլուծել միաժամանակ երկու լեզուների միջոցով:

Սակայն, եթե ուսանողի նպատակը լեզվի պարզապես միայն բառային և քերականական միավորները յուրացնելն է, լեզուն կորցնում է իր կենսունակությունը, քանի որ հնարավոր չէ լեզուն առանձնացնել մշակույթից: Այս ամենի վառ օրինակ են հանդիսանում հաճախ նկատվող լեզվական սխալները, որոնք թույլ են տրվում սկսնակների կողմից, որոնց համար անգլերենը չի հանդիսանում հիմնական լեզու: Եթե, օրինակ, նրանց կողմից բարձրաձայնվի *“the Queen and her family”* արտահայտությունը, բրիտանացին երբեք չի կարողանա հասկանալ, որ խոսողն ի նկատի ունի թագավորական ընտանիքը: Նրա համար ճիշտ և ընկալելի կլինի *“The Royal Family”* արտահայտությունը: Մեկ այլ դեպքում, եթե անգլերեն հնչեցվի *“once in a blue moon”* արտահայտությունը, այն ճիշտ չի լինի թարգմանել որպես՝ «մի անգամ, երբ լուսինը կապույտ էր» նախադասությամբ, քանի որ լեզվակիրը այդպես էլ չի կարողանա հասկանալ, թե տվյալ միտքն արտահայտողը ինչ է ցանկանում հաղորդել: Այդ արտահայտության հայերեն համարժեքը կլինի՝ «*հազարից մեկ, շատ հազվադեպ*»: Նմանատիպ արտահայտությունները շատ են ու բազմազան և կարելի է այդպիսի հարյուրավոր օրինակներ բերել: Նշված արտահայտությունները դարձվածներ են, որոնք շատ բնորոշ են անգլերեն լեզվին, իսկ մայրենի լեզվով խոսողներին դրանք ընկալելի ու հարազատ են բոլորովին այլ ձևակերկմամբ:

Պետք է ի նկատի ունենալ, որ սխալների հիմնական մասն արվում է մայրենի լեզվի ազդեցությամբ: Սակայն նախկինում հիմնական ուշադրությունը բևեռվում էր խոսքի ճիշտ ձևակերպմանը, քանի որ առավել կարևոր էր համարվում արտահայտված մտքի հասկանալի լինելը: Այժմ, երբ լեզուն ուսումնասիրվում է առավել խորությամբ, վճռորոշ կարևորություն է տրվում լեզվի մշակութային կողմին, այսինքն, առաջնային են դառնում լեզուն ուսումնասիրողի և կիրառողի մշակութային առանձնահատկությունները: Այս մեթոդի հիմնադիրներից մեկն է համարվում բազմաթիվ գիտական հոդվածների և աշխատությունների հեղինակ, Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի վաստակավոր պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր Ս.Գ.Տեր-Մինասովան: Ըստ նրա, ժամանակակից հասարակությանն անհրաժեշտ են ոչ թե սոսկ տվյալ լեզվի թարգմանիչներ կամ դասավանդողներ, այլ այնպիսի մասնագետներ, որոնք քաջատեղյակ կլինեն միջմշակութային և միջազգային շփման առանձնահատկություններին և կկարողանան տվյալ միտքը ներկայացնել ու ընկալելի դարձնել՝ օգտագործելով նպատակային լեզվին բնորոշ արտահայտչամիջոցները: Սա, իհարկե, պահանջում է բավական լուրջ պատրաստվածություն և խորը

գիտելիքների տիրապետում, քան պարզապես քերականական ու բառային պաշար յուրացնելը:

Օտար լեզվի ուսուցման արդյունավետ միջոցներից է նաև **հաղորդակցման մեթոդը**, որն ակտիվորեն օգտագործվում է օտար լեզվի ուսուցանման ժամանակ եվրոպական տարբեր համալսարաններում, և որի հիմքում ընկած է գործնական շփումը, բանավոր խոսքի զարգացումն ու ընկալումը: Դասավանդման ընթացքում երկրորդական պլան են մղվում բարդ քերականական կառուցվածքները կամ ոչ հաճախ օգտագործվող բառերը: Սակայն սա չի ենթադրում, որ ուսուցանման այս մեթոդը նախատեսված է միայն առօրյա թեթև խոսակցական հմտությունները զարգացնելու համար: Գիտության որևէ կոնկրետ բնագավառում նպատակային լեզվով խոսելու հմտություններին տիրապետելու համար անհրաժեշտ է մասնագիտական գրականությունը մշտապես կարդալ անմիջապես տվյալ լեզվով: Բավարար չափով բառապաշար ունենալուց հետո արդեն ավելի հեշտ է դառնում մասնագիտական նյութի ընկալումը, ինչպես նաև գործընկերների հետ մասնագիտության շուրջ առավել ազատ և առանց հատուկ ջանքերի զրույց վարելը:

Օտար լեզվի ուսուցման հաղորդակցման մեթոդի հիմնական նպատակը նպատակային լեզվով շփման ընթացքում նաև վախի հաղթահարումն է, և, ունենալով մոտավորապես վեց հարյուրից մինչև հազար բառի սահմաններում բառապաշար և կարողանալով տիրապետել որոշ պարզ քերականական կառույցների, բավական դյուրանում է անգլերեն լեզվով շփումը մասնագիտական թեմաների շուրջ:

Օքսֆորդի և Քեմբրիջի հանրահայտ համալսարաններում դասընթացներն անց են կացվում հիմնականում հաղորդակցման վերոնշյալ մեթոդով, որը միաժամանակ զուգակցվում է նաև ավանդական մի քանի այլ մեթոդների հետ: Այս մեթոդի հիմնական նպատակը, նախևառաջ, անգլերեն լեզվով մտածել և խոսել կարողանալն է: Վերը նշված մոտեցումը հաճախ հիմնվում է խաղային իրավիճակների վրա, երբ դասընկերների հետ շփման ընթացքում տեղի է ունենում սխալների բացահայտում և ուղղում: Ուսուցման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է բերվում ոչ միայն հիշողության, այլև տրամաբանության և վերլուծական մտածողության զարգացման վրա՝ կիրառելով համադրում և հակադրում:

Դասավանդման ընթացքում ներկայացվող նյութը քննարկվում է անգլերեն-անգլերենով և ոչ թե անգլերեն-ռուսերենով կամ որևէ այլ լեզվով, այսինքն՝ նյութը մեկնաբանվում է միայն անգլերեն լեզվով: Նպատակը անմիջապես անգլիախոս միջավայր ստեղծելն է, որտեղ ենթադրվում է, որ ուսանողները պետք է ձգտեն աշխատել, միասին հաղորդակցվել, մտքեր շարադրել և վերլուծություններ անել միմիայն անգլերենով: Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարանների դասընթացները հաճախ միտված են ոչ միայն

լեզվական գիտելիքների զարգացմանը, այլև ուսանողի ստեղծագործաբար մտածելու կարողության խթանմանն ու նրա բազմակողմանի զարգացման ապահովմանը, և, քանի որ լեզուն սերտորեն առնչվում է երկրի մշակույթին, ուստի այն համարվում է տվյալ մշակույթը կրողը, և, այս պատճառով է, որ դասընթացները ներառում են նաև երկրագիտական գիտելիքներ՝ առանձնահատուկ ուշադրություն բևեռելով երկրի քաղաքական կյանքին ու մշակույթին:

Օտար լեզվի դասավանդումն, ընդհանուր առմամբ, միտված է չորս հմտությունների՝ ընթերցանության, գրավոր խոսքի, բանավոր խոսքի և ունկնդրման (reading, writing, speaking, listening) միաժամանակյա զարգացմանը՝ ժամանակակից տարբեր **փեսածայնային** տեխնոլոգիաների օգնությամբ: Վերոհիշյալ **մեթոդը** նպաստում է գիտելիքների ձեռքբերմանը և համապատասխան հմտությունների զարգացմանը, որոնք, ինչպես բազմիցս նշվել է, ժամանակակից գործնական կյանքում խիստ անհրաժեշտ են յուրաքանչյուրին, հատկապես ելույթներ, տարաբնույթ պրեզենտացիաներ նախապատրաստելու կամ գործնական հանդիպումներ ու նամակագրություն վարելու ժամանակ:

Այսպիսով, դասապրոցեսը կազմակերպելիս, առավել նպատակահարմար է դասի առաջին հատվածում անդրադարձ կատարել սովորողի խոսակցական հմտությունների զարգացմանը (այսինքն՝ speaking-ին): Այս ընթացքում կարելի է քննարկել որևէ ազատ թեմա, որին կհաջորդի նախատեսված քերականական նյութի վերլուծությունը, ինչպես նաև նախորդ դասի ընթացքում անցած նյութի կրկնողությունը և ամրապնդումը: Դասի երկրորդ մասը տրամադրվում է ընթերցանության հմտությունների (այն է՝ reading-ի) զարգացմանը՝ բանավոր և գրավոր վարժությունների միջոցով, որին էլ հաջորդում է տեքստային աշխատանքը՝ ընթերցանության տարբեր հմտությունների (skimming-ի կամ scanning-ի) օգտագործմամբ: Բավական դրական արդյունք է նկատվում, երբ ընթերցելուց առաջ ուսանողները պատասխանում են դասախոսի կողմից նախօրոք առաջադրված հարցերին կամ նրանց հանձնարարվում է լրացնել տարբեր բնույթի աղյուսակներ, որոնք էլ սովորողների մոտ առաջացնում են աշխուժություն և հետաքրքրություն առաջիկայում ընթերցվելիք նյութի նկատմամբ: Դասը կարող է առավել տպավորիչ լինել, երբ այն ավարտվում է աուդիոլսումներով, որոնք նպաստում են նյութի դյուրընկալմանը:

Դասավանդման այս մեթոդի հատկանշական կողմերից կարելի է նշել նաև այն, որ այստեղ դիտարկվում է անհատի զարգացումը և նրա աշխարհայացքը, որը հնարավորություն է տալիս զարգացնելու վերջինիս մտածելու ունակությունը: Այլ կերպ ասած, հաղորդակցման մեթոդի հիմքում դրվում յուրաքանչյուր սովորողի նկատմամբ դրսևորվող անհատական

մոտեցումն է, որն էլ հատուկ ուշադրության է արժանանում և աստիճանաբար լայն տարածում է գտնում ամբողջ աշխարհում:

Պետք է նշել, որ ներկայումս հատկապես մեծ կիրառություն է գտնում անգլերենի դասավանդման **ինտենսիվ մեթոդը**, որը հնարավորություն է տալիս սովորողին տիրապետել լեզվին ըստ անհրաժեշտության շատ սեղմ ժամանակահատվածում: Իհարկե, այս մեթոդի ընտրությունը չի կարող բավարար համարվել Բայրոնի և մեծն Շեքսպիրի գրվածքները բնագրով կարդալու և գեղագիտական հաճույք ստանալու համար: Վերոհիշյալ մեթոդի նպատակադրվածությունն այլ է: Այն հիմնականում միտված է խոսքային հմտությունների ձևավորմանը: Օտար լեզվով արտահայտվելը և գրուցակցին հեշտությամբ հասկանալը հնարավոր է դառնում որոշ հիմնական արտահայտություններ հիշելու և շարունակաբար զարգացնելու միջոցով: Երկխոսության և թրեյնինգի միջոցով դասընթացները կարող են ազատ շփում ապահովել ցանկացած թեմայի շուրջ:

Թեստային մեթոդը, որը սկսել է կիրառվել Ամերիկայի Միացյալ Նահանգներում և իր գործածությունը գտել շատուշատ այլ երկրներում, հիմնականում նպատակադրված է սովորողին տարաբնույթ թեստերի և քննությունների նախապատրաստելուն: Բարեհաջող արդյունք գրանցելուց հետո քննության մասնակիցները ստանում են անգլերենի իմացության որոշակի մակարդակ, և նրանց տրվում է վկայական (certificate) կամ դիպլոմ, որտեղ նշված է լեզուն տիրապետելու նրանց համապատասխան մակարդակը (A1, A2, B1, B2, C1, C2): Պետք է նշել, որ թեստերը սովորողին հավելյալ գիտելիքով չեն ապահովում, այլ պարզապես ստուգում ու ատեստավորում են նրա անգլերեն լեզվի արդեն ունեցած գիտելիքները: Այնուամենայնիվ, թեստերն օգնում են սովորողին ավելի լավ պատկերացում կազմել այն մասին, թե նա ինչ չափով է յուրացրել քերականական նյութը, ինչպիսի բառապաշարի է տիրապետում և ուղղորդում են նրան կոնկրետ նպատակի, այն է՝ զբաղվելու շարունակական կրթությամբ կամ գտնելու առավել արժանավայել աշխատանք նախընտրած ոլորտում:

Բացի թեստավորումից համալսարանները կազմակերպում են նաև տարբեր արտոնագրված դասընթացներ, որպեսզի օգնեն մասնակիցներին՝ արդյունավետ կերպով հանձնելու քննությունը իրենց անհրաժեշտ ծրագրի շրջանակներում (TOEFL, ESOL, IELTS, CAE, GMAT, և այլն):

Թեստավորման գործընթացը կիրառվում է նաև մեր երկրի բարձրագույն կրթական հաստատություններում: Հարկ է նշել, որ մեզ մոտ առավել հաճախ օգտագործվում է նաև նախնական թեստավորման տեսակը, որն օգնում է որոշել բարձրագույն ուսումնական հաստատության ոչ մասնագիտական ֆակուլտետներ ընդունված ուսանողների անգլերեն լեզվից ունեցած սկզբնական գիտելիքների մակարդակը և, ըստ այդ թեստի արդյունքների, նրանց ընդգրկել համապատասխան խմբերում՝ վերջիններիս

անգլերեն լեզվի հետագա ուսուցումը արդյունավետ կերպով կազմակերպելու համար: Անգլերենի դասավանդման ցանկացած ձևաչափի շրջանակներում, բացի վերոհիշյալից, կարելի է օգտագործել նաև ստուգողական թեստը, պարզելու համար, թե ուսանողը դասընթացի ավարտին ինչպիսի առաջընթաց է գրանցել: Դասախոսն, ըստ իր հայեցողության, նույնպես կարող է որևէ թեստ առաջադրել՝ ուսանողի մասնագիտական նյութի կամ քերականության յուրացման աստիճանը պարզելու համար: Նմանատիպ թեստերը հաճախ անվանվում են քուիզներ (quiz): Թեստերը հնարավոր է նաև տրոհել ենթաբաժինների՝ ստուգելու համար ուսանողի ընթերցելու կամ գրավոր արտահայտելու հմտությունը, ազատ շփվելու ունակությունը կամ մշակութային իմացությունը:

Ճիշտ է, թեպետ թեստային մեթոդիկայի հիմնական և գլխավոր նպատակը դիմորդին ուսումը արտերկրում շարունակելու կամ աշխատանքի անցնելու համար քննություններին նախապատրաստելն է, սակայն միայն կայուն գիտելիքի առկայությունն այս դեպքում բավարար չէ: Այստեղ կարևորվում է նաև մտքի ճկունությունը, արագ կենտրոնանալու և կողմնորոշվելու ունակությունը, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտությունը և ստեղծագործական մոտեցման դրսևորումը՝ հատկապես բանավոր և գրավոր խոսք (essay writing) ձևակերպելիս:

2005թ-ին Բոլոնիայի գործընթացին պաշտոնապես միանալով, Հայաստանը ստանձնել է պատասխանատվություն՝ դառնալու Եվրոպական բարձրագույն կրթության մաս: Ըստ վերոհիշյալի, ենթադրվում է կատարել փոփոխություններ նաև անգլերեն լեզվի դասավանդման ոլորտում՝ բարձրացնելու ուսման որակը և ստեղծելու նախադրյալներ շարունակական կրթության համակարգի զարգացման համար: Մեր երկրի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին այժմ հնարավորություն է ընձեռված ուսումը շարունակելու Եվրոպական և արտասահմանյան այլ երկրների առաջատար բուհերում, որի համար անհրաժեշտ է ունենալ բավարար չափով գիտելիքներ, ապահովել մասնագիտական պատշաճ պատրաստվածություն և, իհարկե, լեզվի իմացության բարձր մակարդակ:

Ի նկատի ունենալով այն, որ անգլերենը համարվում է միջազգային լեզու, Եվրոպական մի շարք բուհերում մայրենի լեզվի հետ զուգահեռ ուսումնառությունն իրականացվում է նաև անգլերենով: Հաշվի առնելով այն, որ վերջինս համարվում է աշխատանքային լեզու, և, իհարկե, չանտեսելով սովորողի կատարած ընտրությունը, բոլոր առարկաների ուսուցումը կարելի է իրականացնել անմիջապես անգլերենով: Հետևաբար, մեր երկրի բարձրագույն ուսումնական հաստատություններում նույնպես, անգլերենի դասավանդումը անհրաժեշտ է համապատասխանեցնել միջազգայնորեն պահանջվող մակարդակին: Այս նպատակով ավելի արդյունավետ կլինի ավելացնել անգլերենի դասավանդմանը հատկացրած դասաժամերի

քանակը, ուսանողներին տրամադրվող նյութերը համապատասխանեցնել ընդունված ձևաչափին, ստեղծել լսարանային ժամանակակից պայմաններ, որոնք կխթանեն ուսանողների աշխատունակության բարձրացումը, դասապրոցեսը կդարձնեն առավել հետաքրքիր ու նպատակային, առավելագույնս օգտակար կլինեն տարբեր ֆակուլտետների ուսանողներին՝ իրենց ուսումը արտերկրյա առաջատար բուհերում շարունակելու, որակյալ մասնագետներ դառնալու, ինչպես նաև տեղական աշխատաշուկա իրենց մուտքն ապահովելու համար, իսկ ամենակարևորը, շատ ավելի հզոր ու մրցունակ հայրենիք կերտելու գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Chen Desheng, Ashitha Varghese** (2007), “Testing and Evaluation of Language Skills”, Bharathiar University, Coimbatore.
2. **Rossi, P.H. Lipsey, M.W., & Freeman, H.E.** (2004), “Evaluation: A systematic approach” (7th ed.)
3. **Philida Schellekens** (2011), “Teaching and Testing the Language Skills of First and Second Language Speakers”, Produced for Cambridge ESOL.
4. **Н.В.Карпова** (1998), “Интеллектуальная Система Тематического Исследования”, Москва.
5. “Teaching Styles: Different Teaching Methods & Strategies”. Concordia University-Portland. 2013-01-05. Retrieved 2018-07-27.
6. “Lecture Method: Pros, Cons, and Teaching Alternatives”. Blog.udemy.com. Retrieved 2017-12-01.

Դարբինայն Արաքսի- դասախոս, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլերենի թիվ 1 ամբիոն, էլ. փոստ՝ a.darbinyan@ysu.am:

Խալաթյան Լիանա- դասախոս, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլերենի թիվ 1 ամբիոն, էլ. փոստ՝ liana.khalatyan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն՝ 03.11.20, տրվել է գրախոսության՝ 13.11.20 - 20.11.20, երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի կողմից, ընդունվել է տպագրության՝ 18.12.20:

